

Ա. Խ. + Մ.

Հ. Ա. Խ. 2.

~~Թրութարսեր բոլոք յերնունիքի, միացիք~~

# Ա. Վ. Գ Ր ՈՒ Ն Ձ Ե

Ա.Ի.Հ.Մ. ՌԱԶՄԱՌՈՎԱՅԻՆ ԺՈՂԿՈՄ  
ՅԵՎ Ա.Ի.Հ.Մ. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈ-  
ԽԱԿԱՆ ԻՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Թարգմ. Առևելենից

---

Պետական Խաղական Հրատարակության պատվերով  
հրատարակել է Առօկվայի Ակցիոներական Ընկերությունը.

ՏԵՐԵՎԱՆ

1926 թ.

## **Ց Ա Ն Կ**

---

**Ե 2**

1. Մ. Վ. Ֆրունզե (կենսագրություն) . . . . .	4
2. Բնկ. Ֆրունզե. Վորոնեսկի . . . . .	14
3. Հրացանը ծեռքին առաջին դիրքերում.	
Ֆուրմանով . . . . .	26
4. Պերեկոստ. Օհ. Կ. . . . .	30
5. Բնկ. Ֆրունզեն ղեկավարում ել կոիվը.	
Կուկուսկին . . . . .	33

---

Ս. Խ. Հ. Մ.

Հ. Ա. Խ. Հ.

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

# Մ. Վ. ֆ Ր ՈՒ Ն Ձ Ե

Ս.Ի.Հ.Մ. ՌԱԶՄԱՇՈՎԱՅԻՆ ԺՈՂԿՈՄ  
ՅԵՎ Ս.Ի.Հ.Մ. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈ-  
ԽԱԿԱՆ ԻՈՐՀՐՈՒ ՆԱԽԱԳԱՀ

Թարգմ. ռուսերենից



Պետական Ռազմական Հրատարակության պատվերով  
հրատարակել է Մոսկվայի Ակադեմիական Էնկիրութ.

Ե Ե Ր Ե Վ Ա Ն  
1926 թ.

# М. В. ФРУНЗЕ

Нарком военномор С.С.С.Р. и  
Председатель Р.В.С. С.С.С.Р.

---

На армянском языке

---

По заказу Гос. Воен. Издательства исполнено Москов-  
ским Акционерным Издательским Обществом.

ЭРИВАНЬ  
1926 г.



Ա. Վ. ՖՐՈՒՆԶԵ

## ՄԻՒԱՅԻԼ ՎԱՍԻԼՅԵՎԻՉ ՖՐՈՒՆՁԵ

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեն ծնվել է 1885 թ. Թուրքեստանի Հանրապետության Զետիսույի շրջանի (նախկին Սեմիրեչենսկի) Պրիշպեկ գավառային քաղաքում:

Նրա հայրը՝ ծագումով Խերսոնի նահանգի Տիրասպոլի գավառի, Զախարեվսկի (ներկայումս վերանվանված Ֆրունզենսկի) գավառակի գյուղացի եր, ազգությամբ ռուսացած մոլդավացի:

Կանչվելով զինվորական ծառայության, ընկնում է Թուրքեստան, վորպես զինվոր յեվ ապա ծառայությունը վերջացնելուց հետո՝ մտնում քաղաքային ծառայութան յեվ բուժակի պաշտոնով ընդմիշտ մնում ե այնտեղ:

Մայրը Վարոնեժի նահանգի գեղջկուհիներից եւ Ընկ. Ֆրունզեն սկզբնական կրթությունը ստացել է քաղաքային դպրոցում, ապա Վերնի (այժմ Ալմատա) քաղաքի զիմնազիան, վորը հաջողությամբ ավարտում է 1904 թվին։ Ընկեր Ֆրունզեն միայն 12 տարեկան եր, յերբ վախճանվեց նրա հայրը յեվ ընտանիքի նյութական դրությունը ծայր աստիճան վատացավ։ Նա յերիտասարդ հասակից ստիպված

Ե լինում մասնավոր դասերի միջոցով մի կտոր հաց աշխատել իր յեվ ընտանիքի համար։ Գիմնազիան ավարտելուց հետո ընկ. Ֆրունզեն մտնում է Պետերբուրգի (ներկայումս Լենինգրադի) պոլիտեխնիքական ինստիտուտ։

Դեռ գիմնազիայում յեղած ժամանակ նա ծանոթանում է հեղափոխական շարժման յեվ մասնակցում ե ինքնակրթական խմբակներում։ Գալով Լենինգրադ մտնում ե Սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպության մեջ յեվ իսկույն յեվ յեթհարում ե բոլշևիկներին, վորոնց գլուխն եր անցել ընկ. Լենինը։ 1904 թվի վերջերից ընկ. Ֆրունզեն արդեն ցույց ե տալիս ակտիվ մասնակցություն բոլշևիկյան զանազան կազմակերպությունների գործունեությանը։

Մասնակցելով 1904 թ. նոյեմբերին տեղի ունեցած Պետրոգրադի հեղափոխական մեծ ցույցին, ծերքակալվում ե յեվ աքսորվում քաղաքից։ Դա նրա առաջին հեղափոխական մարտական մկրտությունն եր։ 1905 թվի սկզբներից ընկ. Ֆրունզեն սկզբներում աշխատում ե Մոսկվայում, իսկ հետո, Վլադիմիրի նահանգում (Իվանովո-Վոզնեսենսկ)։

1905 թիվը հեղափոխական ուժեղ շարժման տարի յեր, յերբ քանվորական մասսաները դուրս եյին յեկել թագավորի ու կապիտալիստների դեմ։ Գործադուլային շարժման լայն ալիքը ծավալվել եր ամբողջ Ռուսաստանում։ Իվանովո-Վոզնեսենսկի շրջանը ունի շատ մանվածքային գործարաններ, վորոնց քանվորները գտնվում եյին հեղափոխական շարժման առաջին շարքերում։ Ընկ. Ֆրունզեն Իվանովո-Վոզնեսենսկու նշանավոր գործադուլի կազմակերպողներից յեվ ղեկավարներից մեկն է։

Գործադուլի ժամանակ կանգ առան։ այդ-  
շրջանի բոլոր խոշոր գործարանները։

Նույն թվի դեկտեմբերին ընկ. Ֆրունզեն։ ակ-  
տիվ մասնակցություն եւ ցույց տալիս Մոսկվայի-  
քանվորական ապստամբությանը, այդ ապստամբու-  
թյունը 1905 թվի հեղափոխության ամենավառ մո-  
մենտներից մեկն ե, վորպես Ռուսաստանի քանվոր-  
դասակարգի առաջին մասայական ապստամբու-  
թյուն։

1905 թվին ընկ. Ֆրունզեն ընտրվում ե Իվանո-  
վո-Վոզնեսենսկի կազմակերպության կողմից Խոնդո-  
նի Համառուսական Յ-րդ կուսակցական համագումա-  
րի պատգամավոր, իսկ 1906 թվին Ստոկհոլմի կու-  
սակցական IV-րդ համագումարի։ Այդ տարիները նա-  
իվանովո-Վոզնեսենսկի շրջանային կուսակցական  
կազմակերպության, իսկ հետագայում Ռ.Ս.Դ.Բ.Կ.  
Իվանովո-Վոզնեսենսկի միության կազմակերպիչներ,  
վորի մեջ ելին մտնում Խվանովո-Վոզնեսենսկ, Շույա,  
Կինեշմի, Տեյկովա յեվ ուրիշ կուսակցական կազմա-  
կերպությունները։

Իր հեղափոխական աշխատանքի առաջին տարի-  
ներին ընկ. Ֆրունզեն մի քանի անգամ քանտարկ-  
վել ե։ 1907 թվի սկզբում, յերբ ցարական իշխա-  
նությունը, ճնշելով 1905 թվի հեղափոխությունը, հաշ-  
վի նաև քանվոր դասակարգի յեվ նրա առաջնորդ  
Բոլշևիկյան կուսակցության հետ, ընկ. Ֆրունզեն քա-  
նտարկվում է Շույա քաղաքում (Խվանովո-Վոզնեսեն-  
սկի նահանգ)։ Ակզրում նա մեղադրվում է Բոլշևիկ-  
յան կուսակցության անդամ լինելու մեջ, վորի հա-  
մար նրան դատում են 4-ամյա տաժանակիր աշխա-  
տանքների։ Ընկնելով տաժանակիր աշխատանքի վայրը,  
նա նորից դատապարտվում ե, այս անգամ մեղադրվելով

վոստիկանության զինված դիմադրության գործի համար։ Ցարական ռազմական դատարանը դատապարտում է ընկ. Ֆրունզեյին մահապատժի։

Դիխավոր ռազմական դատարանը փոխում է այդ վորոշումը, քանի վոր այդ գործում ընկ. Ֆրունզեյի մասնակցության վոչ մի ապացույց չկար։ Գործը հանձնվում է վերաքննության, յեվ նշանակվում է նոր դատարան։ Նոր դատարանը նորից է հանում մահապատիժ, փոխարինելով 6 ամյա տաժանակիր աշխատանքների։ Այդ 6 տարին տաժանքում պետք է անց կացներ, բացի նախկին 4 տարին։

Ընկ. Ֆրունզեն տաժանքը սկզբում տանում է Վլադիմիրի (5 տարի), հետո՝ Նիկոլայեվի (2 տարի) յեվ վերջապես՝ Ալեքսանդրովի կենտրոնական (Սիբիր) տաժանքի տներում։

Ընկ. Ֆրունզեն 1914 թվի վերջերին դուրս եր գալիս իրկուտսկի նահանգի Վերխուլենսկի գավառ։

Բայց շուտով 1915 թվի ամառը նորից բանտարկվում է արտօրյալների կազմակերպություն ստեղծելու համար։ Բանտ նստելուց նա ազատվում է փախուստով յեվ 1915 թվի վերջերից ապրում է անլեզարդար Զաբայկալի շրջանում Վ. Գ. Վասիլենկո ազգանվան տակ։ Ուրիշների հետ միասին կազմակերպում է Բոլշևիկյան «Արեվելյան Դիտողություն» շաբաթաթերթը յեվ դառնում է նրա խմբագիրներից մեկը։ Վոստիկանության կողմից գործը բացվում է, յեվ ընկ. Ֆրունզեն փրկվում է նոր բանտարկությունից՝ փախչելով Ռուսաստան։ Այսուղ «Միխայլով» ազգանվան տակ պաշտոն է ստանում Համառուսական զեմստվոյի միության մեջ յեվ աշխատում է արեվմտյան ռազմանակատում մինչեվ 1917 թ. հեղափոխությունը։ Ընկ. Ֆրունզեն ցա-

բական բանակում անլեզար կազմակերպություններ ե ստեղծում։ Փետրվարյան հեղափոխությանը ընկ ֆրունզեն արդեն անցնում ե ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունների գլուխ, վորոնց կենարոնը գոնովում եր Մինսկ քաղաքում, իսկ բաժանմունքները արեվմտյան ռազմաճակատի 3-րդ յել 10-րդ բանակներում։

Ընկ. Ֆրունզեն վիետրվարյան հեղափոխության սկզբից դառնում ե Բելուռսիայի յեվ արեվմտյան ռազմաճակատի հեղափոխական շարժման ղեկավարներից մեկը։ Մինսկում նա ղեկավարում ե ցարական վոստիկանության զինաթափումը յեվ ստանձնում ե քաղաքային միլիցիայի պետի պաշտոնը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո Մինսկում կազմակերպում ե բանվորական պատգամավորների խորհուրդ յեվ աշխատում ե՝ վորպես նրա գործկոմի մշտական անդամ։

Ամբողջ Բելուռսիայում կազմակերպում ե գյուղացիական պատգամավորների խորհուրդ անց ե կացնում Բելուռսիայի գյուղացիական յերկու համագումար, յեվ ինքը դառնում ե գյուղացիական պատգամավորների խորհրդի յեվ գործկոմի նախագահ։

Յերբ նրավիրվում ե գյուղացիական պատգամավորների համառուսական համագումար, ընկ. Ֆրունզեն Բելուռսիայի գյուղացիական խորհուրդների կողմից ընտրվում ե պատգամավոր յեվ ընտրվում ե Համառուսական համագումարի նախագահության անդամ։ Ընկ. Ֆրունզեն ռազմաճակատում յեվս տանում ե խոշոր աշխատանք։

Մի շաբաթ ընկերների հետ նա աշխատում ե զինվորական կազմակերպություններում յեվ կազմակերպում ե արեվմտյան ճակատի բանակի համագումարը։

Այդ համագումարը նրան ընտրում է ռազմաճակատային կոմիտեյի անդամ՝ Միաժամանակ ընկ. Ֆրունզեն խմբագրում է այն ժամանակ՝ Մինսկում լույս տեսնող «Բոլշևիկյան «Աստղ» լրագիրը։ Գևոներալ Կորնիլովի հականեղափոխական ապստամբության որերին, ընկ. Ֆրունզեն ընտրվում է ռազմաճակատային կոմիտեյի յեվ Մինսկի խորհուրդների գործկոմի կողմից Մինսկի շրջանի հեղափոխական զորքերի շտաբի պետ։ Շատ չանցած՝ 1917 թ. ոգոստոսի վերջին ընկ. Ֆրունզեն տեղափոխվում է Իվանովո-Վոզնեսենսկի շրջանի Շույա քաղաքը, վորտեղ աշխատել եր մինչեվ աբոր։ Շույա քաղաքում ընկ. Ֆրունզեն ընտրվում է քաղաքային դռւմայի, գավառային զեմստվոյի վարչության բանվ. գյուղ. գինվորների պատգամավորների խորհրդի նախագահ։

Հոկտեմբերյան հեղափոխության որերին ընկ. Ֆրունզեն անցնում է Շույա Իվանովի շրջանի զինվածութերի գլուխ ու հոկտեմբերի 30-ին հասնում է Մոսկվա զինվորներից ու զինված բանվորներից կազմված 2000-ոց ջոկատով յեվ անմիջական մասնակցություն ե ցույց տալիս Մոսկվայի փողոցներում, Խորհուրդների իշխանության համար, մղվող կոիվսերին։ Խորհրդային իշխանություն հաստատելուց հետո, յերք Իվանովո-Վոզնեսենսկի նահանգը կազմակերպված եր, ընկ. Ֆրունզեն ընտրվում է նահանգային գործկոմի նախագահ։ Նա միշտ յեղել է Շույայի գավառային յեվ Իվանովո-Վոզնեսենսկի նահանգային Բոլշևիկյան կուսակցական կոմիտեյի նախագահ, իսկ 2-րդ համագումարից սկսած նա ընտրվել է բոլոր խորհուրդների համագումաներին։ Վլադիմիրի նահանգը ընկ. Ֆրունզեյին Բոլշևիկյան կուսակցության կողմից ուղարկել է Համառուսական Հիմնադիր ժողով։

1918 թ. գարնան յեվ ամառվա ընթացքում ընկած քրունգեն նահանգային գործկոմի, կուսակցական կոմիտեյի նախադահի պարտականությունների հետ, տարել է նայեվ նահանգային ռազմական կոմիսարի յեվ ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահի պաշտոնները:

Յարոսլավի հակահեղափոխական ապստամբությունը ճնշելուց հետո, ընկած քրունգեն նշանակվում է Յարոսլավի շրջանի (օկրոց) ռազմական կոմիսար, իսկ 1918 թ. դեկտեմբերին, յերբ ծովակալ Կոլչակը՝ գրավելով Սիբիրը, առաջ եր խաղում դեպի Մուկվա, ընկած քրունգեն նշանակվում է Արեվելյան ռազմանակատի Խ-րդ բանակի հրամանատար: 1919 թ. ապրիլին, յերբ Կոլչակի բանակը հասել եր Խորհրդային Ռուսաստանի վրա կազմակերպված, հարձակումների ամենաբարձր զարգացման, յերբ ստեղծվել եր մեծ վտանգ ու սպառնալիք Կազանին, Սիմբիրսկին ու Սամարին, ընկած քրունգեն նշանակվում է Արեվելյան Ռազմանակատի Հարավային մասի չորս բանակների (Խ-րդ, Լ-ին, Թուրքեստանի յեվ Վ-րդ) հրամանատար: Ընկած քրունգեն կազմակերպում է յեվ հասցնում մեծ հարված Բուզուլուկի կողմից հարձակվող Կոլչակի բանակների զորաթեւվին: Այդ ռազմավորությունը զգալի չափով հարվածում է Կոլչակովցիներին, լուծում է Կոլչակի հարձակողական զորաշարժը յեվ ստիպում է նրան բանակի հետ նահանջել ամբողջ Արեվելյան հակատով:

Մնալով Հարավային զորախմբակի հրամանատար, նա ամիջականորեն ղեկավարում է Թուրքեստանի բանակը, վորք գործում է Ռումիայի ուղղությամբ յեվ հաջող անց է կացնում Ռումիայի զորաշարժը: Ռումիայի վրա հարձակվելիս կրասնի Յար գյուղի

մոտ, Բելայա գետը անցնելու ժամանակ ընկեր Ֆրոնզին, գտնվելով Իվանովո—Վոզնեսենսկի գնդի հետ առաջապահ ղերքերում, վերավորվում ե հակառակորդի ողանավից զցված ոռոմբից։ Ուժայի մոտ տարած այդ հերոսական զորաշարժի համար ընկ. Ֆրոնզին պարզեվատրվում ե Կարմիր Դրոշի շքանշանով։

Հունիսի վերջին ընկ. Ֆրոնզին նշանակվում ե Արեվելյան ճակատի բոլոր բանակների հրամանատար, հաջողությամբ ղեկավարում ե բոլոր ռազմական գործողությունները մինչեւ կարմիր զորամասերով Զալբինսկի զրավելու մոմենտը ու նրան ամբողջ ռազմանակատով Ռւրալյան լեռներից անցնելը։

Ոգոսոսոսին՝ Արեվելյան ռազմանակատը բաժանվում ե յերկու ուղղության՝ Սիբիրի յեվ Թուրքեստանի։ Ընկեր Ֆրոնզին նշանակվում ե Թուրքեստանի ռազմանակատի (XI-րդ, IV-րդ, I-ին յեվ Թուրքեստանի գորքերի) հրամանատար։ Ընկ. Ֆրոնզին սեպտեմբերի ընթացքում տանում ե մի շաբք զորաշարժեր ու վոչնչացնում ե Կոլչակի Հարավային բանակը, վորը գտնվում եր գեներալ Բելիյի հրամատառության տակ։ Վորպես հետեւվանք այդ զորաշարժերի, վերականգնվում ե կապը Թուրքեստանի հետ, իսկ Որենքուրդի կազակները անցնում են խորհրդային իշխանության կողմը։ Ընկ. Ֆրոնզին դեկտեմբերի ընթացքում Ռւրալի ռազմանակատի լիկվիդացիայի համար ղեկավարում ե մի շաբք ռազերացիաներ, վորը հաջողությամբ վերջացնում ե դեկտեմբերի վերջին՝ Դուրյեվ քաղաքը յեվ Կասպից ծովի ափերը գրավելով։

Մնալով Թուրքեստանի ռազմանակատի բանակների հրամանատար, ընկ. Ֆրոնզին նշանակվում ե Համառ. Կենտրոն. Գործադիր Կոմ. Թուրքեստանի

գործերով զբաղվող հանձնաժողովի անդամ յեվ նույնալես մ. կ. կ. (բ)Կենտ. Կոմիտեի նույնանման հանձնաժողովի անդամ:

1920 թ. փետրվարից մինչեւ ոգոսոս ամիսը ընկ. Ֆրունզեն աշխատում եւ թուրքեստանում յեվ ղեկավարում եւ Սեմիրեչենուկի սպիտակ գվարդյականների ռազմանակատի լիկվիդացիայի գործողությունները։ Ոգոսոսի վերջին Բուխարայի հեղափոխական ժողովուրդը ապստամբվում է յեվ տապալում եւ նմիրին. այդ ժամանակ ընկ. Ֆրունզեն կարմիր բանակի զորամասերով ոգնում եւ հեղափոխական իշխանության ամրապնդման յեվ ապստամբների հետմաքրում եւ մանուկ հանրապետությունը եմիրի սպիտակ գվարդյականներից։ 1920 թ. սեպտեմբերի ընկ. Ֆրունզեն նշանակվում է Հարավային ռազմանակատի հրամանատար, վորը գործում եւ Վրանզելի դեմ։ Նոյեմբերի վերջին վերջացնում է Հարավ. Ռուսիայի հականեղափոխության լիկվիդացիայի գործողությունը յեվ գրավում Դրիմ թերակղզին։ Այդ նշանավոր պանծալի ռազմական արշավանքի համար ընկ. Ֆրունզեն Հ. Կ. Գ. Կ-ց ստանում եւ հեղափոխական պատվի զենք, մի սուր շքանշանով յեվ Կարլ Մարքսի նկարով՝ համապատասխան մակագրությամբ։

Արտաքին ճակատների լիկվիդացիայից հետո ընկ. Ֆրունզեն նշանակվում է Հանրապետության Ռազմահեղափոխական Խորհրդի Լիազոր Ռւկրանյայում յեվ վերջինիս բռլոր զինված ույժերի հրամանատար։ Նրա անմիջական ղեկավարությամբ լիկվիդացիայի յեւ յենթարկվում Պետլյուրովշինան յեվ Մախնովշինան։ 1921թ. Պոլտավայի նահանգի Ռեշետիլովկա գյուղի տակ հետախուզման ժամանակ շրջապատվում եւ մախնովշիներով յեվ աջ կողից ստունում կրկնակի վերը։ Նրա վերաբերն յոթ տեղից

գնդակով ծակոտվում ե. պատհականությունը միայն փրկում ե նրան մահից: Նա կրկին սպարզեվատրվում ե Կարմիր Դրոշի շքանշանով:

1920 թ. նոյեմբերյան Համառկրայնական կոնֆերենցիայում ընկ. Ֆրունզեն ընտրվում է Ռէկրայնայի կոմ. Կուս. (բ) Կենտրոնական Կոմիտեյի անդամ, իսկ Ռէկրայնայի խորհուրդների Համագումարին՝ Համառկրայնական Կենտրոնական կոմիտեի անդամ:

Ընկեր Ֆրունզեն անդամ ե Համառուսական կենտրոնական սկսած խորհուրդների Ռ-րդ համագումարից: Բ. Կ. Կ. (բ) Խ-րդ համագումարին ընտրվում է Կենտրոնական անդամ, մնալով այդպիսին մինչեւ աժմս:

1924 թ. ապրիլի 1-ին ընկ. Ֆրունզեն նշանակվում ե Ս. Խ. Հ. Մ.-ի Բ. Հ.-ի Նախագահի տեղակալ յեվ ընկ. Տրոցկու յերկարատեւվ հիվանդության շնորհիվ, փաստացի ղեկավարում ե Կարմիր բանակը: Միաժամանակ ընկ. Ֆրունզեն Բան. գյուղացիական Կարմիր բանակի շտաբի, Ռազմական Ակադեմիայի պետ եր յեվ Գլխավոր Ռազմական Խմբագրական Խորհրդի նախագահ:

1925 թ. հունվարի 26-ին Ս. Խ. Հ. Մ. Կենտրոնական կոմիտե ընկ. Ֆրունզեյին նշանակում ե Ռազմական յեվ Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսար յեվ Ս. Խ. Հ. Մ. Ռազմ. Հեղափ. Խորհրդի նախագահ:

Ընկ. Ֆրունզեն Բ. Կ. Կ. (բ) Կենտ. Կոմիտ. Ռէկրայնայի Կոմկուսի Կենտրոնական անդամ ե և Ս. Խ. Հ. Մ. Կենտրոնական նախագահության անդամ:

## ԸՆԿ. ՖՐՈՒՆՁԵ

(Արտենիյ)

Յերունզե, Արտենիյ, Միխայիլ...

Նրան լավ են ճանաչում եվրանովո-վոզնեսենսկու արդյունաբերական շրջանի բանվորները, գյուղացիները կարմիր բանակայինները յեվ քաղաքացիները։ Միայն մեր խառնակ որերից չե, վոր նրան ճանաչում են։ Նրան հիշում են այն տարիներից, վորոնք վաղուց անցել, կորչում են անցյալում։

1907 թ. հունվարին, Շույա քաղաքի արվարձաններից մեկում, մի խումբ բնողհատակյա հեղափոխական բոլշևիկներ պատահմամբ հանդիպում են ուրյադնիկ Պերլովին, վորը ներքին թշնամիների վոչնչացման գործում հանդիսանում եր, վորպես մի հավատարիմ վոստիկանական շուն։

Խմբից մեկը նկատեց, վոր լավ կրիներ ուրյադնիկին մեջտեղից վերցնել յեվ որա նման ինչ վոր բան ասեց։ Այն ժամանակ մի ուրիշը ծնկի չոքեց մառզերը հանեց յեվ արձակեց։ Գնդակը վրիպեց։ Ուրյադնիկը արագությամբ ուշքի յեկավ յեվ իր հերթին կրակ բացեց։ Ուրյադնիկի վրա արձակողի փամ-

փուշտը լովեց մառզերի մեջ. պատասխանել չեր կարելի .հարկադրված եյին հեռանալ: Արձակողի կեղծ անունը Արսենիյ եր: Նա զահել ուսանող եր: Ճառագայթող աչքեր ուներ յեվ կաղում եր մի վոտքից, վորովիետեվ 1905 թ. զարդի ժամանակ հարբած, գազանացած կազակները նրան մի վերստաչափ քարշ եյին տվել թոկով:

Ուրյաղնիկի վրա արձակելը մտածված գործողություն չեր. նամանավանդ, վոր արձակողը տերրորիստ չեր, այլ՝ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ յեվ մասնակցում եր մասսայական քաղաքական աշխատանքներում:

1907 թվի մարտի 24-ին Շույա քաղաքի գաղտնի բնակարաններից մեկում կալանավորվեց նրանցից մեկը, վորին այնքան վաղուց վորոնում եյին ժանդարմները յեվ վոստիկանությունը: Նրան կալանավորեցին զոյզ մառզերը ծեռքին. նա ուզում եր պաշտպանվել, բայց չվստահացավ, վորովիետեվ տանը յերեխաները յեվ կողմնակի մարդիկ կային: Նրան Արսենիյ եյին կոչում, բայց այդ նրա կեղծ անունն եր. նրա խոկական ազգանունն եր Միխայիլ Ֆրունզե:

Թե ո՞վ եր յերիտասարդ բնդհատակյա աշխատողը Շույայի բանվորների համար, կարելի յե յեզրակացնել հետեւյալից: Արսենիյի ծերքակալման լուրը համարյա վարկենապես տարածվեց քաղաքում: Գործարանները կանգնեցին: Բանվորները դադարեցրին աշխատանքը, մեծ խմբով մոտեցան բանտին յեվ պահանջեցին ազատ արձակել Արսենիյին: Վախեցած բանտապետը միայն խորամանկությամբ յեվ կեղծ խոսումներով կարողացավ խաբել բանվորներին յեվ ապա Արսենիյին արագությամբ ողարկեց Վաղիմիր:

Ռւղարկելու տեսարանը հետաքրքիր էր: Զինվորների ամբողջ մի վաշտ փայլում էր սվինների պողպատի պաղությամբ: Կարգ-կարգի հետեւից համաչափ որորվում ելին մոխրագույն շարքերը Նրանք ուղեկցում ելին միմիայն մի մարդու Միխայիլ Ֆրունզեյին: Պատվավոր պահակով տանելն արժեր:

Մի քանի ամսից հետո պատահմամբ դատական պրոցեսներից մեկի ժամանակ ուրյադնիկ Պերլովը վկայի դերում հանդիպեց Արսենիյին դատարանում յեվ տեղն ու տեղը հայտնեց, վոր սա իր վրա առնակ արծակողն է: Ցուցումն արծանագրեցին: Ֆրունզեն նստած եր բանուում յեվ յեռանդով շարունակում եր իտալերեն լեզվի յեվ սինդիկալիստական շարժման ուսումնասիրությունը:

. . . Դատը յեղանք. մահվան պատիժ հանեցին իտալական լեզվի դասերը վերջացան, բայց սկսվեցին, կարծեմ, անգլիական լեզվի ուսումնասիրության պարապմունքները: Ո՞վ զիտե, զուցե շուտով Անգլիակամ իտալիա կրնկնի. Արժե՞ արդյոք ջահել, հարցասեր ուսանողին լինել Անգլիայում յեվ իտալիայում: Ի հարկ ե, շատ յեվ շատ արժե:

. . . Դատավճիռը փոխեցին: Այդ փոփոխման դեմ բողոքեցին: Նորից մահվան հոդված, նորից դատինչպես եր ջանում ուրյադնիկը, Վ. Գ. Կարալենկոյի վկայությամբ — („Русское Братство“ 1910 թ. № 10 էջ. 134) նա իր հաշվով վկաներից մեկին Շուայից Վլադիմիր բերեց յեվ անձամբ տարավ Վլադիմիրի դատարանի դատախազի մոտ: Մեծ յեռանդ ուներ խոռվարարների՝ վոչնչացման մեջ:

. . . Դատավճիռը նորից փոխեցին... նորից բո-

ղոքեցին... Իսկ ժամանակը անցնում եր ու անցնում։ Այսպես անցավ վոչ պակաս յերկու տարուց։ Յերկու տարի բանտարկված ընկերները նայում եյին ջահել, ամուր պարանոցին, յերկու տարի հայացքները ակամա հառում եյին այդ պարանոցին յեվ թվում եր թե տեսնում են նրա շուրջը այն մահաբեր, խեղղող յեվ զազիր ողակը—յերկու տարի... Յեվ յերկու տարի յենթաղրվում եր, վոր Անգլիա յեվ Իտալիա պետք ե գնալ։

Բայց առանց լեզուների ի՞նչպե՞ս կերթաս։ Յեվ մի՞թե խելացի չեն վարվում այն մարդիկ, վորոնք գալուց առաջ նախորոք ուսումնասիրում են լեզուները։

Յերկու տեսակի մահապարտներ կան. մի տեսակի վրա անչափ ծանր ե նայելը. մյուսների վերաբերմամբ ավելի բարդ զգացումներ ես ունենում՝ ցավի զգացմանը խառնվում ե հսկարա զիտակցությունը, վոր նրանք կարող են մեռնել. Թրունզեն վերջինների թվին եր պատկանում։

Գործը վերջացավ տաժանակիր աշխատանքներով. Դեց տարի նա նստեց Գյաղիմիրի կենտրոնական բանտառում։

Մահացու, խոնավ, մոյալ յեվ անտանելի պայմաններում Միխայիլը արթնացնում եր ընկերների միտքը, թույլ չեր տալիս կենդանի զգացումները վոշնչանալու յեվ հանգստություն եր մտցնում բանտացին որերի զրզոված, զղայնացած, թախծոտ յեվ ծանր մթնոլորտի մեջ։

Այդ որերին տաժանակիր բանտերում գործադրվում եր ծեծ յեվ ամենալավիրշ ծաղը ու ծանակ բաղաբական տաժանակիրների վերաբերմամբ։ Մի ժամանակ Վլադիմիրի կենտրոնական բանտի պետն

եր Գուղիման։ Մի մարդ, վոր ուներ դիակի դեմք յեվ դեվի հոգի, ինչպես կաներ Հյուզոն։

Զազրելի զեր մսագործ, պոպուան, լոլոտած կաշ- լով, նեխած շնչառոթյամբ, զորտի աչքերով, դահ- ցի, յեղվիտի յեվ զազանացած քաղքենու մի խառ- նուրդ։ Առանձնապես ոժեղ եր նրա մեջ՝ Թրունզե- յին մարմնական տաճանքների յենթարկելու ցան- կությունը։ Յերբ բանար այցելության եր դալիս վո- րելի ականավոր կառավարչական դեմք նա հարց- նում եր։

— Հմ... ասացեք, ծեզ մոտ, կարծեմ, սպահվում ե-  
Մ. Թրունզեն։

Նրան առաջնորդում ելին կամերան յեվ նա հե-  
տաքրքրոթյամբ նայում ու դիտում եր։

. . . Յերբ քաղաքական կարանավորների մեջ ա-  
ռաջ եր զալիս ընդհարում, վեճ յեվ այլ անհամու-  
թյուններ, նրանք դիմում ելին ընկ. Թրունզեյին։

. . . Յեվ այսպիսի մարդուն վո՞չ մի անգամ ը-  
ծեծել, չդնել կողլու վրա. Գո՞նե մի անգամ... թող  
շատ ել չփրվի։

Բայց մինչեվ անգամ այդ մսագործը, քաղքենու-  
յեղվիտի յեվ դահինի խառնուրդը հարմարավոր դեպք  
չգտավ։

Իսկ այդպիսի դեպք նա մի ժամանակ վորոնում  
եր համառորեն։ Դեպքը չներկայացավ։

Տարիներ բանտում, աքսորավայր։ Անլեզար աշ-  
խատանք Սիրիլում, կարանավորման նոր փորձ, փա-  
խուստ, անլեզար կյանք։

Տարասի հետքը գտնվեց...

Հեռու Մերձվոլգյան ստեղներում, յերկար ու ազ-  
մական շարքերով ծզված ե Սևլ Շովակալի Ուժի-  
մյան դիվիզիան։ Նրանք վստահ ելին իրենց ուժերին։

Նրանք զնում եյին Մոսկվայի վրաւ Արանք լավագույն զորամասերն եյին, փորձառու պատահականի հույս ու ապավենը: Նրանց հանդիման, ուազմական գծի այն կողմբ, վազոնները դուրս եյին շպրտում նոր բանակի ջամանակ չամրացած զորամասերը: Նոր զինվորների շարքերում յերեվում եյին սաղավարտ—զիսարկները խոշոր կարմիր տաղերով, վոր այնորան նման եյին վարյագների յեվ վասնեցովյան դյուցագունների սաղավարտներին: Նրանք բաղցած բանվորական շրջանից եյին: Նրանց միացըին վոլգայի շրջանի բանվորներին: Նրանք յեկել եյին մի յերկրից, վոր շրջապատված եր վիթխարի կրակե ողակով, մի յերկրից, վոր կարծես խեղդվում եր այդ մահաբեր սառն զրկախառնության մեջ: Նրանք շուտով կը ընվեն վերջին մահաբեր կովով... Նրանք բոնվեցին: Ուժիմյան ղիվիզիան ջարդված եւ Փառը յերիտասարդ բանակին: Բայց չմոռանանք նրա հրամանատար ընկ. Թրունզեյին, վորովինակ նա յերբեք չի յեղել զինվորական շտաբներում յեվ ակաղեմիաներում, բայց հանդիսացավ, վորպես հիանալի կարմիր զորավար:

.... Արդեն Ուժայի տակ յերեվում են կարմիր, աստղերով սաղավարտներ: Սեվ Շովակալը վերջին կշռաբարն ե զցում ուազմական կշեռի նժարի մեջ՝ զալիս են Կապակելի զնզերը:

— Կապակելյաններն են զալիս... Կապակելի գընդերը պարտություն չգիտեն... Կապակելի զնզերը զընում են Մոսկվայի վրա: Նրանց վազոնների վրա զրված են Կուրգան—Ուժա—Մոսկվա... Նրա հետ եյին բանակի ամենափորձառու զինվորական մասնագետները:

Նորից հակատամարտ: Կապակելը ջարդված եւ:

Մի միջնադեպ ճակատամարտից... Սաղավարտներով յեվ կարմիր աստղերով գունդը անցավ զետք: Հակառակորդը նրանց վրա թնդանոթային կրակ եթափում: Նրա շղթաները ավելի յեվ ավելի ուժեղ ու համարձակ վազք են կատարում: Սաղավարտավորները շփոթվեցին... Ահա ցնցվեց մի շղթան, ըրբացավ մյուսը:

— Ընկերնե՞ր, այս կողմը: Վո՞չ մի քայլ հետ: Հառա՞ջ, իս հետեւվից: Հրամանատարը ծեզ հետ ե: Կաղալով, հրացանը ծեռին, առաջից վազում եմ մեկը:

— Հառա՞ջ, հառա՞ջ.

Դիվիզիայի հրամանատար՝ քաջարի յեվ խիզախ Զապայեվը բղավում են

— Ընկ. հրամանատա՞ր, հեռացե՞ք այստեղից, այս ձեր տեղը չե:

— Հառա՞ջ, իմ հետեւվից, ինձ վրա յեմ վերցնում գնդի հրամանատարությունը:

— Ընկ. հրամանատար, այստեղ յես եմ դիվիզիայի հրամանատարը, դուք իրավունք չունեք կարգադրելու իմ զորամասերում:

Ռումբ ե ընկնում... կոնտուզիա:

Չե, վոչ միշտ, վորպես մահապարտ յերկու տարի բանտում նստելը, վոչ միշտ 6 տարվա տաժանակիր աշխատանքները յեվ յերկարատեվ թափառումները, վոչ միշտ, ի բարեբախտություն մարդկության հպարտության, ընդունակ են աչքերից դուրս նետելու ճառագայթող յեռանդը, մարելու նրանց թարմ փայլը, զրկելու մարդուն խիզախությունից,—վոչ միշտ նրանք դարձնում են մարդուն անթեվ ու թուլամամորթ, անողնաշար յեվ աղոտ: Փառք յեվ պա-

տիվ մարդկության յեվ այն կուսակցության, վորի շարքերում մարտնչում են այսպիսի մարդիկ:

... Որենքուրզյան ստեղներում, շնորհիվ յերիտասարդ կարմիր գորավարի շնորհայի հրամանառարության յեվ զգուշավոր տակտիկայի, գերի յե ընկնում կազակների վաթսոննազարանոց զորաբանակը:

Աւրեմն նա կարողանում է հաղթահարել թրշնամուն վոչ միայն բաց մարտաղաշտում, այլ յեվ հարկադրում է հանձնել զենքը, առանց արյունահեղության. առ առանձին շնորք է:

Աւրալյան ստեղներում ընկ. Ֆրունզեն կորիգլուխ ջարդում է տաղանդավոր յեվ խելացի սեվ հարյուրակային զեներալ Տալատոյի բանակը:

Հեռու թուրքեստանում ընկ. Ֆրունզեյի ղեկավարությամբ մարրվում է Կասպիականը:

Թող ներեն ինծ դիպլոմատները, կարծում եմ, վոր Բուխարական հեղափոխականների փայլուն գործողությունները, վոր վերջացան եմիրի արտաքսումով, առանց կարմիր գորավարի մասնակցության չեր:

... Զինվորական ոպերացիան հարավային ֆրոնտում Վրանգելի ղեմ ընկ. Ֆրունզեն կատարում է զարմանալի խիզախությամբ յեվ շեշտակի: Պերեկոպի յեվ Սիվաշի գրավումը մեր հեղափոխության պատմության ամենափայլուն եզերից մեկն է: Պարանոցի ամրացման վրա աշխատել եյին ֆրանսիական հմուտ ինժեներներ: Ընկ. Կամենեվը, վոր շրջել եր հարավային ֆրոնտում առաջխաղացման նախորյակին, անորոշ պատասխան տվեց, յերբ նրան Մոսկվայում հարց տվին Պերեկոպը յեվ Սիվաշը վերցնելու հնարավորության մասին: Այս մասին Ստեկլովը

առաջնորդողում արտահայտել եր, եապես, շատ յերկը-  
չու հոյսեր:

Բայց կարմիր լավան արդեն վողողել եր Դրիմի  
թերակղզին:

Մարքսիստ, տերորիստ, ազիտատոր, ընդհատակ-  
յամարդը՝ ուազմանակատի հրամանատոր:

Միթե նիշտ չե, վոր այս մարդը ոժոված ե  
պատահու տաք սրտով, տերորիստի անձնական տղա-  
մարդոթյամբ յեզ վոչ հասարակ խելքով:

Բայց ինչպես նա ստրամեգ յեվ զորավար դար-  
ձավ: Իհարկե, նա ձեռները ծալած չեր նստել, այլ  
սովորել եր, կարդացել, դառեր վերցրել նին մասնա-  
գետներից, սուզել յուր բայլերը, բայց վերջ ի վեր-  
ջո ո՞վ կարող ե հետեւվել-տեսնել այն բարդ, խորհր-  
դավոր յեվ վոլորապտույտ նաևապարհը, վորով աշ-  
խարհի ամենահրաշալի լաբորատորիայում—ուղեղում  
բոսյակից դուրս ե գալիս հոչակավոր գեղարվեստա-  
գետ, իսկ ընդհատակյա ազիտատորից՝ զորավար—որի-  
նական հպարտությունը Նոր Բանակի: Ո՞վ զիտե:

Հնկ. Միխայիլը զիտե համախմբել իր շորջը  
յեվ ընտրել մարդկանց: Նրա հետ աշխատողները  
այդ զիտեն: Նրա հաղթությունները խոշոր կազմա-  
կերպողի հաղթություններ են: Նրան սիրում են ըն-  
կերները, հարգում մասնագետները: Նա «կարողա-  
նում ե դրստել»: Նա յենթարկում ե իրեն իր անձնա-  
կան հմայքի ուժով, նրա բառերը հասարակ են, բայց  
նրանց յենթարկվում են ավելի լավ, քան տիրական  
հրամաններին:

Նրան յենթարկվում են անձնական հմայքի պատ-  
ճառով. բայց վոչ միայն այդ պատճառով:

Մի ծանոթ զրույցի ժամանակ նկատեց՝

— Հնկ, Ֆրունզեն շատ փափուկ մարդ եւ:

Բայց մյուսը, վոր նրա հետ նստել եր Վլաղիմիրի կենտրոնական բանտում, պատասխանեց.

— Դուք նրան չեք նանազում. իրավ ե, նա փափուկ ե իր անծնական հարաբերությունների մեջ, բայց դուք դեռ չգիտեք, թե նա ինչ կայծաքար մարդ ե իր ներսում. Նա վիթխարի կամքի ուժ յեվ ամուր սիրո ունի:

Այս ճշմարտության նման եւ նրան հպատակվում են նայել այն պատճառով, վոր զգում են այդ ամուր սիրոը յեվ ուժեղ կամքը:

Չգիտեմ վորպիսի, բայց ինչ վոր դեր, այն ել բավականաշափ, նրա տաղանդավոր կարմիր հրամանատար դառնալու մեջ խաղացել եւ այն հանգամանքը, վոր ազատ լուպեներին նա բավականությամբ քարշ եւ գալիս զենքի հետ. մարրում ե, քանդում, հավաքում: Այդ լուպեներին նա նման եւ խաղալիքների հետ քարշ յեկող յերեխայի:

Լ. Ն. Տոլստոյը մարդկանց բաժանում եր յերկու կարգին նրանց, վորոնց մեջ զերակշում եւ տղամարդային մտակամզը յեվ նրանց, վորոնց մեջ զերակշում եւ կանացին: Նրա կարծիքով, առաջինների մեջ վարմունքները հետեւյանք են մտքի գործունեության յեվ նրանով ել վորոշվում են: Յերկորդների մտքի գործունեությունը ուղղված ե զգացմունքների կողմից դրված նպատակին հասնելու կամ զգացմունքներից վարմունքներ արդարացնելու համար:

Թվում ե, թե ընկ. Ֆրունզեյի դրանցից յեվ վոչ մեկին չի պատկանում. նրա մտքերը չեն արդարացնում զգացումներն ու վարմունքները, վորովինելի նա ներքուստ արդարացի յէ. բայց յեվ չեն ենշում, չեն բոնարարում զգացումները, չեն դարձնում նրանց

գիտակցության հլու յեվ անխոս ստրուկներ։ Կան  
սինթեզի մարդիկ, վորոնց յեվ միտքը յեվ զգացումը  
հիմու արդեն—մեր աններդաշնակության դարում—  
հասել են համեմտական բարձր ներդաշնակության։

Ինձ թվում եւ այսպիս և ֆրունզեն...

Մենք բալշեվիկներս զարմանալի շռայլ ենք։  
Նայեցեք մեր ախոյաններին յեվ թշնամիններին։ Վոր-  
պիսի մանրակրկիտ ուշադրությամբ նրանք հավաքում  
յեվ պահպանում են հիշողության մեջ այն բոլորը,  
ինչ արժանի յե նկատառության։ Վորպիսի սիրով են  
նկարված Կալյայեվը, Բալմաշովը, Գերշոնին, մի  
կողմը թողած դեռ կադետական գործիչներին։ Մենք  
անմտորեն շռայլ ենք։ Բայց մի՞թե ի դեմս ֆրունզեյի  
մենք ավելի պակաս մեծ դեմք ունենք, քան Կա-  
լյայեվը, Գերշոնին յեվ այլք տեսե՞ք, զոյների վոր-  
պիսի հարստություն կա այդ մարդու մեջ։ Ազիտա-  
տոր, մարքսիստ, տերրորիստ, մահապարտ, հրամա-  
նատար, վոր նրացանը ձեռին, մարտիկների հետ  
միասին, պառկում եւ շղթայում։

Վոչ, այս պետք եւ շեշտել, թեկուզ հենց միայն  
այն պատճառով, վորպիսզի մի ավելորդ անգամ  
յեվս ասենք հեղափոխական պրոլետարիատի կուսակ-  
ցության մասին՝ հակառակ դաշնակիցների բոլոր  
արյունառություններին յեվ ծանրազույն պայման-  
ներին, վառողամաններում դեռյեվս վառող կա։

Էնկ. Ֆրունզեն արևնակցական կապերով կառ-  
ված եւ իվանովո-Վոզնեսենսկի շրջանի հետ, թե  
ներկայում, թե անցյալում։ Շեշտելով նրա աչքի ընկ-  
նող հատկությունները յեվ ծառայությունները, մենք  
նախ յեվ առաջ այս բոլորը անց ենք կացնում մեր  
նահանգի կարմիր զուլիակի հաշվին, վորովինենվ նրա

հետ միասին նրանք մարտնչել են Վոլգայի շրջանում,  
Աւֆայի յեվ Որենը ուրզի տակ, Աւրալի վրա, Կաս-  
պիականի մոտ յեվ Ղրիմում:

**Թարգմ. Մ. Խանզադյան**

---

## Տ. ՇՈՒՐՄԱՆՈՎ

### ՀՐԱՑԱՆԸ ԶԵՐՔԻՆ ԱՐԱՋԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Վճռականություն, սառնասրտություն անձնագոհություն... ահա ընկեր Ֆրունզեյին հասուկ գծերը Աշխատանք ընդհատակում, Նիկալայի բանտեր, տաժանակիր աշխատանք... ահա նրա կյանքի ուղին:

Հեղափոխական կովում յեվ աշխատանքում կոփվում ե ընկ. Ֆրունզեյի վոգին՝ հաղթանակի յեվ գրոհի վոգին:

Յեվ յերբ պրոլետարիատը վերցնում է իշխանությունը իր ձեռքը, ընկ. Ֆրունզեն դառնում է Կարմիր բանակի հրամանատար:

Հոկտեմբերյան որերին ընկ. Ֆրունզեն Բվանովնույայի շրջանի հրամանատարն է:

Արեվելյան ռազմանակատում, յերբ Կոլչակը առաջխաղացմամբ մոտենում է Կազանին ընկ. Ֆրունզեն անցնում է 4-րդ բանակի գլուխը: Յեվ այն որից 4-րդ բանակը դեռ պարտություն չի կրել:

Միայն մի անգամ գնդերից մեկը ցնցվեց... թշնամին ուժեղ եր, շեշտակի կրակը, յեվ գունդը տատանվեց...

Յերեվաց Ֆրունզեն... յեվ գունդը նոր ուժգնու-

թյամբ հարծակվեց առաջ... սպիտակները փախչում-  
եին...

1920 թիվն եւ Վրանգելը մեկնում եիր արյու-  
նու թաթը Դոնիքասին։ Ընկեր Ֆրունզեն ընդունում  
ե Հարավային ռազմաճակատի հրամանատարու-  
թյունը։

Ռազմաճակատի հենց առաջին հրամանում գրվում  
ե՝ «Վրանգելը պետք է ջարդվի յեվ կջարդվի...»։

Իսկ հրամանին հետեւյում են Պերեկոպի յեվ  
Սիվաշի կոինսերը... ինքը, հրամանատարը առաջին  
դիրքերումն եւ։

Դրիմը վերցրված եւ։

\* \* \*

Թշնամին դեն շպրտվելով դեպի վեր, հավաքեց  
իր ուժերը յեվ հարծակվեց Իվանովո-Վոզնեսենսկի  
գնդի վրա։ Արդեն առավոտյան ժամի 7-ն եր։

Այն ժամանակ, յերբ կանգած եյին Տուրքասլա-  
կում յեվ դեմոսարատիվ գրոհներից կրակով պաշտ-  
պանվում եյին, յերբ ազարակի կողմն եյին քշում  
թշնամուն, Իվանովցիները կրակեցին բոլոր փամ-  
փուշաները յեվ այժմս մնացել եյին համարյա դա-  
տարկ ծեռքերով, հույս չունենալով, վոր շուտով նորը  
կըհասնի, հիշելով ամբողջ ջոկատի հրամանատար  
Յելանի հրամանը։ «Զնահանցել, հիշիր վոր պահեստում  
կան միայն սվիններ»։ Այո, նրանք բացի սվիններից ել  
վոչինչ չունեյին։ Յեվ ահա, յերբ ցուցադրական գրոհի  
փոչինչ չունեյին։ Յեվ ահա, յերբ ցուցադրական գրոհի  
փոխարեն, թշնամին դիմեց լայն յեվ իսկական հա-  
ռաջխաղացման, շղթաները ցնցվեցին, մարտիկները  
չդիմացան, հետ-հետ գնացին։ Այժմս գնդի հրամանա-  
տարը Բուրովը եր, իսկ կոմիսարը՝ Նիկիտա-Լապարը՝  
նրանք արշավում եյին զորաթեւվերով, բղավում

Եյին, վոր կանգ առնեն նահանջողները, շտապ-շտապ բացատրում եյին, վոր իզուր ե, փախչելու տեղ չկահետեւը գետն ե: Անցնել անհնար ե, վոր պետք ե վեր կենալ ամրանալ յեվ հարծակվել:

Յեվ ցնցված մարտիկները այլեվս չնահանջեցին. կանգ առան: Այդ ժամանակ սրարշավ մոտեցան շղթաներին միքանի ձիավորներ ու ցած թռան գետին՝ այդ ֆրունզեն ե, նրա հետ բանակի քաղբաժնի պետ Տրալինը ու մի քանի մոտիկ մարդիկ:

Նա հրացանը ձեռքին առաջ վազեց, կանչելով — «Ուռա, ընկերներ, առաջ»:

Մոտիկ կանգնածները ճանաչեցին: Նրա գալույան լուրը կայծակի արագությամբ տարածվեց շրթաներում:

Բացառիկ մոմենտ եր... Սակավ եյին կրակում՝ փամփուշտներ քիչ կային, դիմադրում եյին թշնամու առաջխաղացումը սվինով: Յեվ այնքան մեծ եր հերոսական վոգեվորության թափը, վոր այժմս ցնցվեցին թշնամու շղթաները՝ հետ դարձան ու փախուստի դիմեցին: Յելանն իր բանքերներին (օրդինարեց) ուղարկեց ֆրունզեյի մոտ յեվ հրամայեց լինել միշտ նրանից անթաժան, յեվ յեթե կոպանեն նրան, ինչ եւ վոր լինի, հանել կրակից և անցկացնել դեպի շոգենավը:

Բեկումն արդեն կատարված եր, դրությունը՝ վերականգնված: Ֆրունզեն թողեց գունդը յեվ մեկնեց մի ուրիշ գնդի մոտ:

Բարձրանում եյին բլակների, բլուրների վրա, զննում եյին տեղը, խորհրդակցում եյին ինչպես ավելի լավ տանել գործողությունը, նորից յեվ նորից ուսումնասիրում եյին բարտեզը, զննում եյին ուշաղիր յուրաքանչյուր կետը յեվ համեմատում եյին այն իրականում տեսածի հետ: Հենց նույն պա-

հուն յերեվացին թշնամի քանակների զորայուները։  
Նրանք հյուսիսից ցանկանում եյին հարվածել հար-  
ծակման պատրաստ մեր կենտրոնին։ Ֆրունզեն ցան-  
կանում ե մասնակցել այդ մարտին, բայց Յելանը  
աղերսում ե նրան մեկնել անցարան (պըռպարա) յեվ  
արագացնել մյուս դիվիզիայի գնդերի անցումը դեպի  
կովի դաշտը։

Համաձայնվեցին... գտան, վոր այդ լավ կը լինի  
յեվ ֆրունզեն սրարշավ դիմեց դեպի անցարան։

Շատ չանցած մոտիկ պայթած ոռոմբը սպա-  
նեց նրա տակի ծին յեվ ինքն ել սաստիկ սալաջարդ  
ստացավ (Կոնցուզիա)։

Չնայած նրան, վոր վնասված եր՝ այնուամենայ-  
նիվ հասավ ափի, ոգնեց իր խորհրդով հրետանու մի  
մասի արագ անցմանը դեպի մարտի դաշտ։ Իվանովո-  
վոգնեսենսկի գնդին ոգնության հասավ բոլորից  
առաջ Խրեբտովի մարտկոցը։ Նա կանգնեց շղթաների  
հետեւը յեվ թշնամու հենց առաջին գրոհին, յերբ  
մեր շղթաները սառած—քարացած սպասողական  
դրության մեջ եյին, կրակ բացեց, յեվ մարտիկները,  
լսելով իրենց մարտկոցի ձայնը, վեր թռան յեվ ու-  
ռարախ առաջ անցան։

Թարգ. Շ. ՞Ն.

## ՊԵՐԵԿՈԹ

Պերեկոպ, անունը միայն առաջացնում է պայծառ պատկերացում մեծագույն հեղափոխական լարման կարմիր բանակի արտասովոր հերոսական քաջության։ Միայն, Կրոնշտադտը, գուցե, յերբ կարմիր մարտիկները, մինչեվ ծնկները զրի մեջ, ֆուզաներով ականած սառուցի վրայով, ծովային յեվ ամրոցային թնդանոթների մրրկային ռմբակոծության տակ, սվիններով վերցնում ելին ամրություններն ու զրահապատները—գուցե Կրոնշտադտը կարող է համեմատվել Պերեկոպի հետ։ Յերբեք չպիտի մոռացվեն Պերեկոպի հերոսական, փառահեղ, բայց միեվնույն ժամանակ, ահալի յեվ մղձավանցային որերը։

Այսուղ եր կենորոնացը կ Վրանգելը իր լավագույն սպայական գնդերը։ Հրաշալի բնական դիրքը՝ նեղ պարանոցը, կես վերստ լայնությամբ, աղի լերի արանքում—անգլիացիների յեվ ֆրանսիացիների ծեռքով հիանալի կարգավորված յեվ անմատչելի բերդ եր դարձրած։ Թշնամու խոշոր թնդանոթներից յեվ գնդացիրներից զարգացրած կրակը յերբեմն հասնում եր այնպիսի փոթորկային ուժի, վոր թվում եր

թե գրոհ գնացողներից վոչ վոր չի ազատվելու ամեն ինչ կը հնձվի:

Բայց մեր հառաջխաղացումը չընդհատվեց: Կապարի անծրեվը կտոր-կտոր եր անում առաջացող մասերին: Ընկնում եյին առաջին շղթաները, նրանց հետեվից յեվ նրանց վրայից աներկյուղ գնում եյին նորերն ու նորերը:

Մասսայական թափը յեվ վոգեվորությունն այն ժամանակ անսովոր եյին. մահվան մասին չեյին մտածում. չկար վոչ մի դասալիք: Կարմիր մարտիկները մրցում եյին միմիանց հետ անորինակ բացության մեջ: Պատմության մեջ անորինակ այս կովում կոմոնիստները, զրավելով մասսան յեվ կորցնելով իրենց կազմի 70%-ը, գնում եյին առաջին շարքերում:

Բոլորը մի ծգտում, մի ցանկություն ունեյին՝ շուտով հոգեհան անել Անտանտի վերջին շանր: Անսասանելի կամքով դեպի մարտ յեվ հաղթություն, «ուռա» յեվ «տալի՞ս ես Դրիմը» աղաղակների տակ, կարմիր մարտիկները առաջ եյին խաղում բոցեղեն քողի միջով, լուսարձակների «ցերեկվա» լույսի տակ լծակների վրա մեկնած նեղ գերանների վրայով: Կրծքով ճեղքելով յերկաթալարերը, թափվում եյին հակառակորդի խրամատները, սվինի եյին գնում, զրոհում եյին զրահապատները յեվ զրահապատ գնացքները:

Այն ժամանակ հարկ յեղավ հաղթահարել վոչ միայն մարդկային արվեստը յեվ մահը, այլ յեվ տարերը: Նոյեմբերի 8-ի գիշերը, յերբ զորամասերը անցան հարձակման, Սիվաշը ցամաք եր: Իսկ սուպուտյան վիչեց արեվելյան քամին յեվ ալեկոծ ծովը հետեւից հարձակվեց մեզ վրա: Հետեւից առաջ եր խաղում ծովը, առաջից բոցեղեն քողը:

Արագությամբ հողապատնեշ բարձրացրին, կանգնեցրին ջուրը, ծովը... յեվ թշնամու կատաղի ալեծուփի կրակի տակ, անզուսպ լավայով թափեցին Դրիմ քամուց արագ քշեցին Վրանգելին յեվ ընդմիշտ շուռ տվին նրան ծովը:

Կարմիր մարտիկները անսահման քաջության հրաշքներ ելին զործում այդ պատմական որերում Յերբեք չեն մոռանա աշխատավորները այդ ճակատամարտները, վորոնք կարմիր քանակի հերոսական զորամասերին յեվ նրանց ղեկավար Միխայիլ Վասիլ' յեվիչ Ֆրունզեյին ծածկել են անթառամ փառքով:

Թարգմ. Մ. Խ.

## ԸՆԿ. ՖՐՈՒՆԶԵՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ Ե ԿՈՒՎԸ

Հրետանու մարտը սկսվեց Սիվաշի յեվ Զոնգարի նեղուցների ամբողջ յերկարությամբ։ Կարմիր հրետանու տրաքոցները հակառակ ափում, արծագանք են տալիս մեզ մոտ։ Արկերն ընկնում են յեվ խրամատները, պատում են հողը յեվ ահազին սյուներով վերեվ նետում, կարծես թե զվարճանում են, խաղում…

Յեվ թվում ե, վոր սկսվել ե դժոխքի խաղը, սատանի նենգամիտ պարը, վոր անսպասելի բարկացել ե յեվ վորոտ ու կայծակ ե բերում այս ոշաշնանը անսովոր պարզ ու տաք առավոտին։

Նեղուցի վրա բարձրացող յերկաթուղագծի թմբի նեղ շերտը, տեսողությունից հեռանալով՝ բանի գնում նեղանում ե այնքան, վոր դառնում ե հազիվ նշմարելի մութ թել։ Դա պատվարն է։ Իննուններորդ բրիգադի տեղամասի վրա ծանծաղուաներ չկան։ Անցնելու համար նշանակված կետերում հակառակորդը ջարդեց մոտ բան նավակ, վորոնք այդտեղից պիտի անցնելին։ Նշանառության կետը ուղիղ եր։ Այնտեղ ըստ յերեվութին հուսալի հետախույզներ են նշանակված։ Ակնհայտ ե, վոր

բոլոր ջանքերը ապարդյուն են: Կեսորին թշնամու զրահապատ գնացքը շարժվելով «Տաղանաշ» կայա- րանից մինչեվ պատվար, ոմբակոծեց յերկաթուղա- յին շրջանը յեվ հետ գնաց՝ հալածվելով մեր սավառ- նակներից յեվ մարտկոցների կրակից:

Գիշերը վրա յե հասնում. մոայլ, նենգամիտ, ցուրտ ու զարհուրելի գիշերը... Նա նոր վերջացած որվա հակապատկերն ե... Ցուրտ յեվ քամի... Ասես, թե նրանք ուրախացան, վոր արեվը թագնվեց մի ինչ վոր տեղ անապատի հեռվում, ոգտվում են նրա բացակայությունից յեվ կարծես, վրեժինողիր լինում նրա ժամանակավոր հաղթության համար ու զվար- ձանում:

Առաջիւ նման հակառակորդի կողմից զալիս ե հրետանու, փոթորկալից կրակի ծայնը, լուսածիզը կապույտ յերանգավորված սպիտակ լույսով ակո- սում ե նեղուցին իջած խավարը, ժամանակ առ ժա- մանակ պտտվելով վեր են բարձրանում ուակետնե- րը: Ելդ թշնամին ե, իր զրահապատների աշխա- տանքը թեթեվացնում: Նրանք մի քանի հատ են: Շարժվում են պատվարով, ոմբակոծում մերոնց յեվ նորից հետ քաշվում հակառակ ափիր:

Բրիգադը պատրաստ ե: Բոլոր հրամարատար- ները յեվ զինվորներն իրենց տեղերում են: Առաջ խա- ղալու պատրաստ դիրքերի շարքերն են մտել քաղա- քական աշխատողներ: Յեկել ե ժանանակը ազիտա- ցիան տանելու գործողությամբ՝ հրացանը— դասա- խոսության փոխարեն, թնթանոթը— միտինգի:

Ամեն բան իր ժամանակին:

Զգացվում ե, վոր վրա յե հասնում հուզիչ գի- շերը. մահացու վտանգների յեվ հերոսական քաջու- թյունների գիշերը:

Խրամաներում շատ հաղորդում են իրար՝  
— Հարամանատարը ժամանել ե...  
— Էպարեսի՞ջը.  
— Հենց ինքը...

Բանակի որամանատարի ներկայությունը մարտի ժամանակ առաջին դիրքերում, դա նոր ապացույց ե ուղմանակատի դրության լրջության յեվ առաջիկա գործողությունների դժվարության։

Բայց կարմիր մարտիկները ապահով են ապագայի համար։ Նրանք վատահ են հաջողության մեջ։

Սիրիրում ինչեւ չելին անում... Ահա, Արեվելյան արշավանիքին մասնակցող՝ շատ բան տեսած հին կարմիր բանակայինների խմբակը։

Շատ նահանջել են, շատ եւ հարձակվել։ Արշավանիքը անցել են գետեր յեվ վերցրել կատարելագործված ամրություններ։

Վաղ անցյալում տեղի ունեցած մարտերի մեջ ակամայից կենտրոնացնում ե իր վրա Բելայա Գետի անցումը, նախ Ռւֆա քաղաքի յեվ ապա՝ ինչպես Ռւբալի, այնպես ել Սիրիրի իրար հաջորդող մանր Ռադարների կրկին անգամ զբավելու պահուն։ Յեվ քաղաքների կրկին անգամ զբավելու պահուն։ Յեվ քայլուն գործողությունը ակամայից համեմայլ վայլուն ակամայից համեմատվում ե Սիլաշի նեղուցի առաջիկա հակատամարտի հետ։

— Գոնե այսեղ պատվար կա։  
— Իսկ այստեղ ի՞նչպես եր։  
— Լողալով եյինք անցնում...  
Կամուրջը սպիտակները պայթեցրել եյին...  
— Այ, անիծյալներ, զիտեն ժողովրդական ունեցվածքը վոչնչացնել...  
— Խոսք չկա, այդ մասում վարպետ են։  
Ռւֆ, տաք գործ եր... են եւ վոնց...

...վոր նիշում ես նիմա յել դուրեկան ե...

Վիրավորված եյի յես այն ժամանակ... Առողջացա... Այն ժամանակ Հարավային խմբակ ունեցինք... Հրամանատարը ընկեր Ֆրունզեն եր... Միա այսպես, ինքը անցարան (օրից անցնելու տեղ) յեկավ... Կրակի տակ մեզ հետ եր...

— Կենդանի մնա՞ց...

— Ի հարկ ե, այժմս ուազմանակատի հրամանատարն ե:

— Վո՞ր:

— Հենց մեր:

Ռազմանակատի հրամանատար Ֆրունզեյի ներկայությունը քաջալերում ե ու կենդանացնում կարմիր բանակայիններին: Ընկ. Ֆրունզեն կարմիր բանակային միջավայրի հրամանատար ե. դեռ Արեվելյան ոպերացիայում ձեռք ե բերել անվախ յեվ փորձված զորավարի համբավը: Նա արհամարուս ե վտանգը յեվ բաժանում այդ շարքային կարմիր բանակայինի հետ, յեթե այդ պահանջում են հանգամանքները: Զե՛ վոր նա մերն ե: Յեվ այդ վերեվից մինչեվ ներքեվ սերտորեն միացած ընտանիքը կապվում ե ավելի սերտորեն, ունենալով մի ցանկություն՝ հաղթել, ինչ ել վոր լինի...

Յերեկոյան դեմ հայտնի յեղավ, վոր Պերեկոպի վրա կարմիրները, մերձենալով, գրավել են բարձր ամրությունները:

Այնտեղ սկսվեց կատաղի, արյունալի կոխվէ կոխվը դեկավարում ե ինքը՝ ուազմանակատի հրամանատար ընկ. Ֆրունզեն:

\* \* \*

Առաջինը հարձակվեց 288-րդ զունդը. Սկզբում մի զումարտակով: Գնացին, ասես ներս ծծվեցին,

թագնվեցին խավարի թանձրության մեջ, ծածկվելով  
թանձր, մոայլ ծածկոցով։ Գնում են խարխաքելով,  
իրար հետեւից... Առաջին, յերկրորդ... յերրորդ  
վերսոր անցան աննկատելի։ Թշնամին չեր կասկա-  
ծում նրանց ներկայությունը։ Առաջվա նման  
շարունակվում ե մենամարտը։ Մեր արկերը պա-  
տովում են հակառակորդի ափին։ Հակառակորդինը՝  
մերի վրա։

Իբր թե, վոչ նրանք, վոչ ել մյուսները չեն իմա-  
նում առաջ թողած, պատվարով բարձրացող խիզախ  
մարտիկների մասին։ Ահա թշնամու զրահապատը։  
Նկատեցին։ Ընդառաջ ե սլանում սպանիչ կրակը։  
Բայց շղթաները ընթանում են։ Անցան չորրորդ վեր-  
սոր։

Զրահապատը՝ ոմբակոծելով, հետ-հետ ե գնում,  
քայց իր կործանարար հրանոթային կրակով, քա-  
ղաքացիական կովի պատմության մեջ դեռ չտես-  
նված, սարսափելի կորուստ պատճառելով, հարծակ-  
վող մասերին։ Առաջին գումարտակը համարյա ամ-  
բողջովին կորավ։ 2-րդ գումարտակը հետ դուրս ե  
գալիս գնդի հրամանատար ընկեր Կուզնեցովը։ Յեր-  
կրորդ գումարտակի շղթաները ասես՝ բուսան ընկած-  
ներին փոխարինելու համար։ Այժմ ել չեն թագնվում  
գնում են աշկարա, հարծակվում են ուռայով, գրոհում  
են, ասես աշխատում են արճին ու կրակ ժայթքող պող-  
պատե հրեշին կենդանի-կենդանի տրորել։ Դա զրա-  
հապատ չե, այլ ամբողջ մի մարտկոց՝ վեց դյումիա-  
նոց, յերեք դյումանոց յեվ այլ մեծության թնդա-  
նոթներով։ Նա մեկ մարտիկներին, մոտ տարածու-  
թյան վրա, թողնում ե, վոր իրեն մոտենան, մեկ ել  
անխոցելի հետեւ բաշվում, ոմբակոծելով հարծակվող  
մարտիկներին... Ահա նրա շուրջը բոլորեցին, շրջա-

պատում են... Բայց զրահապատը ասես ոծածուկ-  
նորից սողալով, դուրս եւ պրծնում յեվ առաջվա նման-  
վուանգավոր ու դաժան դառնում։ Կարմիր բանա-  
կայինները կատաղել են։

— Ինչքան մարդ փչացավ, իսկ նա դեռ ելի...  
— Պետք եւ զիծը քանոդել լսվում եւ մթության  
մեջ։

— Իսկ դինամիո վերցրել ե՞ս։  
— Դինամիոն ի՞նչ ե, քար կըդնենք ու եւ դուրս  
չի պրծնի։

— Ուղիղ ե... դեհ, տղերք, գործի...  
Խավարում ծնված միտքը, ասես վերեվից գըց-  
ված, հանկարծ քաջալերում եւ հարծակվող մարտիկ-  
ներին յեվ արագ՝ ի կատար ածվում։

Մթության մեջ քարեր են վորոնում, քարշ տա-  
խս, բերում զրահապատի ճանապարհը կտրում։ Զրա-  
հապատը թակարդն ընկավ։ Նորից գրոհ։ Մարտիկ-  
ները արդեն բարձրանում են այդ պողպատից հա-  
լած, ահագին գուղծը (կոշտ) կպչում են թնդանոթ-  
ների յեվ գնդացիրների փողերին, ծակում, սպանում  
սպիտակ գվարդիական սպաներին ու թնդանոթային  
սպասավորներին։ Ներս խուժեցին։ Գրավեցին։ Հաշ-  
վեցին ու յժերը։ Գումարտակից մնացել եյին միայն  
քսան հոգի։

Գիշերը թագնվում ե։ Պարզ, արեվկա որը կամաց  
կամաց քացվում ե Ղրիմի անապատում։ Կոխվը շա-  
րունակվում ե։ Առաջվա նման հակառակորդի կող-  
մից լսվում ե հրետանու թնդոցը։ Տարածության հե-  
ռավորության պատճառով թշնամու թնդանոթների  
աշխատանքը՝ իր նալատակին չի հասնում։ Առաջ  
անցած յերկու գումարտակները իրենց հետ վերցրել  
են միայն մի քանի գնդացիրներ։ Նրանք, մոտենալով

յերկաթալարերին, պառկեցին խուսափելով անտեղի զոհերից։ Անվեհեր մարտիկների գլխով սուր սուլոցով թոշում են գնդակները յել ծծվում Սիվաշի նեղուցի դառն ջրերում։

...Բայց ահա խոսեց Զինզարի նեղուցի անցառանի վրա յեվ մեր հրետանին։ Այնտեղ արդեն սպիտակներին քշում են։

Մեր թնդանոթները, վորոնք արդեն անց են կացված թերակղզին, ոմբակոծում են թշնամու դիրքերը։

Թշնամու դիրքերի վրա ճախրում են մեր սպառնակները յեվ ոռմբ-ոռմբի հետեւից զցում հակառակորդի զրահապատի յեվ մարտկոցի վրա։ Նորից լավում ե զիւ կարմիր «ուռա»...

Մարտիկները դուրս են թոշում շուտափույթ փորված խրամատներից յեվ զրոհում թշնամու ամրությունները, պատռում յերկաթալարերը։

Թշնամին ցնցվեց յեվ գլորվեց...

Թարգմ. Շ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ



---

Գրառ. № 172 ը.      Տիրաժ 3000.      Պատկ. № 5148.  
Տպագրական տրեսորի 2-րդ տպարան, Յերեվան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045185

A I  
8330

[124]